ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԳՐԻԳՈՐ Է ԱՆԱՎԱՐՁԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՂԱԾ ՆԱՄԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Գ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

XIII դարի վերջին Կիլիկիայում հրապարակ հանվեց օրագրային մի փաստաթուղթ, որը նախատեսում էր քրիստոնեական եկեղեցիների միավորման ճանապարհով լուծել երկրի համար կենսական անհրաժեշտություն դարձած մի խնդիր. դա Արևմտյան Եվրոպայից ակնկալվող ռազմաքաղաքական այն օգնությունն էր, որը շրջապատող մահմեդական երկրների հետ մղվող պայքարում պետք է օժանդակեր Կիլիկյան Հայաստանի հետագա գոյատևմանը։ Այս ծրագիրը (կտակ), որը շարադրված է նամակի ձևով[1] հղված Հեթում Բ թագավորին (1289—1306)[2], հեղինակել է Կիլիկիայում լատինասերների խմբավորման պարագլուխներից մեկը՝ Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսը (1293—1306(07))։

Դեռևս XIX դ. վերջերին Ա. Տեր-Միքելյանն առաջ քաշեց այն կարծիքը, որ նամակի հեղինակը Գր. Անավարզեցին չէ[3], սակայն այս դրույթը լայն քաղաքացիություն չստացավ, որովհետև հեղինակը հիմնավոր կռվաններ չի բերում ապացուցելու իր եզրահանգումը, և նամակի հեղինակային իրավունքի որոշման այն բոլոր փաստարկները, որոնց վրա հենվում է Ա. Տեր-Միքելյանը, անընդունելի են[4]։

Հայագիտության մեջ որպես նամակը շարադրելու տարեթվեր ընդունվում են 1303 թ.[5], 1306 թ.[6], 1307 թ.[7]։ Լ. Խաչիկյանը, ընդհանրացնելով պատմագիտության մեջ ամենից լայն տարածում ստացած տեսակետներից երկուսը, հետևյալ կարծիքն է հայտնել. «Մ. Չամչյանի կարծիքով այս գրությունը շարադրված պետք է լինի 1294 թվականին։ Ըստ այդմ այստեղ Առաքելոց եպիսկոպոս կոչված տեր Հովհաննեսը՝ նույնանալու է Տիրացու եպիսկոպոսի հետ

---

1 *Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄամՄ), ձեռ. № 2037, թ. 136ա, Կղէմէս Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ,* Clemente Gelano, Conciliationis ecclesiae Armenae cum Romana, pars prima: Romae, 1650, p. 435 *(այսուհետև՝ Կղ. Գալանոս)։*

2 *Հեթում Բ թագավորը գահակալել է որոշ ընդմիջումներով։ Այստեղ տվել ենք նրա պաշտոնական գահակալության և հրաժարականի տարեթվերը։*

3 *Ա. Տեր-Միքելեան, Եկեղեցական աղմուկները ԺԴ դարի սկզբում (Արարատ, Վաղարշապատ, 1893, էջ 515)։*

4 *Նույն տեղում, էջ 511—522։ (Որպես նամակը շարադրելու տարեթիվ հեղինակն ընդունում է 1308 թ.)։*

5 *Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, մասն Ա (Բ տպագրութիւն), Պէյրութ, 1960, էջ 1775, Տիրայր վարդապետ Անապատական, Համառօտ պատմութիւն հայ-լատինական յարաբերութեանց, սկիզբէն մինչեւ 1382, Անթիլիաս-Լիբանան, 1973, էջ 167 (այսուհետև՝ Անապատական)։*

6 *Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 308—309, Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 557, Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, 6-ԺԸ դդ., հ. Բ, Երևան, 1976, էջ 889։*

7 J. D. Mansi, Sacrorum conciliorum nova et amplissima collectio, vol. 25, Graz-Austpia, 1961, p. 139. *Գր. Գալէմքեարեան, Թուղթ. Ցովհ. Ա., կաթողիկեայց, գլ. Ե, № 7, 8, առ Հայս (Հանդէս ամսօրեայ, 1906 (VIII), էջ 229)։*

1294 թվականը, սակայն, անհավանական է, քանի որ թղթի գրության ժամանակ Սյունաց եպիսկոպոս է հիշվում Հովհաննես Օրբելը՝ 1303 թ. վախճանված Ստեփանոս Օրբելյանի հաջորդը։ Ուստի ճիշտ պետք է համարել Մ. Օրմանյանին, որ նամակի շարադրման ժամանակը հարմար է գտնում «գոնե մինչև 1304 թ. հետաձգել»[8]։

Կղ. Գալանոսը, որի ձեռքի տակ, հավանաբար, եղել է մի աղբյուր, որն առայժմ անհայտ է, նախքան նամակի բովանդակության շարադրանքը, ներկայացնում է հետևյալ տեղեկությունը. «Սմա (իմա Գր. Անավարզեցուն) անձնեալ էր թղթով Բոնիֆացիոս ութերորդ պապն, զի ամենայն զգուշութեամբ և ջանիւ հոգասցէ ածել զեկեղեցի և զժողովուրդն հայոց ի միաբանութիւն կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցոյն Հռովմայ։ Եւ կաթողիկոսեն Գրիգոր ոչ անփոյթ արար զհրամանն զայն, քանզի մնալով ի ժամանակին այնմիկ արձակեալք ի խռովութեանց պատերազմի երկոքին արքայքն Հայոց. այս Հեթում և Լևոն. որդին իւր, որում հայրն անձնեալ էր զառաջնորդութիւն թագաւորութեան, որպէս զի ինքն կարասցէ անհոդս աղօթել, և անխռով հետևիլ կրօնաւորութեան իւրում, ուստի զայս տեսանելով կաթողիկոսն Գրիգոր համաբեաց գոլ դիպուկ ժամանակ վասն կատարելոյ զցանկացեալ միաբանութիւն, զոր խնդրեալ էր պապն։ Եւ զմտաւ ածելով, եթէ թագաւորահայրն Հեթում, որպէս այր կրօնաւոր և աստուածասէր, յօժարամիտ լինէր առ ի սիրումն նոյն միաբանութեան, քան զԼևոնն, վասն այսորիկ գրեաց առ ինքն Հեթում մի թուղթ»[9]։ Այժմ վերոբերյալ տեքստից փորձենք պարզաբանել մեզ հետաքրքրող հետևյալ հարցերը։

Ա. Ե՞րբ է Բոնիֆացիոս Ը պապը (1294—1303) այդպիսի բովանդակությամբ նամակ առաքել Կիլիկիա՝ Գր. Անավարզեցի կաթողիկոսին։ Բ. Գահակալական կռիվների որ շրջանի մասին է խոսքը. Սմբատի և Հեթումի, թե՞ Կոստանդինի ու Հեթումի։ Գ. Ինչպիսի՞ ավարտ ունեցան գահակալական կռիվները, ե՞րբ Հեթումն անցավ իշխանության գլուխ և իրեն գահակից ընտրեց Լևոնին։ Դ. Ե՞րբ է Գր. Անավարզեցի կաթողիկոսը շարադրել վերոհիշյալ նամակը (Բոնիֆացիոս Ը պապի նամակը Կիլիկիա է առաքվել 1298 թ. հոկտեմբերի 26-ին)[10]։

Քննվող ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանում գահակալական արյունահեղ պայքար ծավալվեց Հեթում թագավորի ու նրա երկու եղբայրների՝ Սմբատի և Կոստանդինի միջև։ Սարգիս Պիծակ Սսեցուն (XIV դ.) վերագրվող ժամանակագրության մեջ կարդում ենք. «1296 (ՉԽԵ) Հեթումն զՍմբատն եդիր յաթոռն և ինքն էառ զպարոն Թորոս և գնաց ի թագաւորութիւնն (իմա՛ Բյուզանդիա)»[11]։

Հեթում Բ-ն և Թորոսը Կոստանդնուպոլիս են մեկնել 1296 թ. վերջին, իրենց քրոջ՝ Մարիամի հրավերով[12]։ Ներսես Պալիանենցի ժամանակագրական

---

8 Լ. Խաչիկյան, Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը (Բանբեր մատենադարանի, № 11, Երևան, 1973, էջ 138—139)։

9 Կղ. Գալանոս, էջ 434—435։

10 V. Langlois, Essai historique et critique sur la constitution sociale et politique de L'Arménie. St. Petersbourg. 1860. p. 30. Pot hasi II, 1979, ep. 2474, 26. oct. 1293, Լ. Կոգեան, Հայոց եկեղեցին մինչև Փլորենտիան ժողովը, Բեյրութ, 1961, էջ 743։

11 Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դդ., հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 106, Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր ժամագրքին 1319, նկարագրեց՝ Արտ. արք. Սիրմէեան, Անթիլիաս-Լիբանան, 1933, էջ 101։

12 Մարիամն ամուսնացել էր բյուզանդական կայսր Անդրոնիկոս Բ-ի (1282—1328) որդու՝ Միքայել Թ Պաղեոլոգի (1295—1320) հետ, նրանց ամուսնական հանդեսը տեղի էր ունեցել 1296 թ. հունվարի 16-ին։ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դդ., հ. II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 182, Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 428, 459.

հատվածներում (XIV դ.) մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ պահպանվել է հետևյալ տեղեկությունը. «Եւ Հէթում կոստանդին և Թորոսն տային զթագաւորութիւնն յեղբայրն իւրեանց Սմպատն և ինքեանք գնացին ի Կոստանդնուպոլիս։ Իսկ Սմբատն առնու թագ և օրհնութիւն և թագաւորեաց ամս Գ (3)։ Եւ կացեալք նոքա ի դուրս՝ իբր թէ ամի մի դարձան և կամէին թաթարով ձգել զՍումբատն և առնուլ զպարոնութիւնն և նայ նախիմա եղեալ, կալաւ զնոսա և եդ ի բանգի։ Եւ գրգռեցեամբ չար իշխանաց հրամայաց սպանանել զԲ(2) եղբայրն իւր։ Այլ որ գնաց սպանանել զԹորոսն ետ լարիւ խեղդել զնա։ Իսկ որ գնաց սպանանել զՀէթումն, զի ոչ էին ի մի տեղի, ոչ եսպանայ։ կորացուցց զաչսն։ Իբր այս լինէր, չորրորդ եղբայրն Կոստանդինն յարեաւ ի վերայ և եկեալ ի Սիսոյ քաղաքն զօրօք. մերձ քաղաքին կռուեցան հայերն ընդ իրարս ի մարգն Սիսոյ, ուր բազումք եղբարք զեղբարք սպանին և աղգականք զմիմեանս, վասն անճանաչութեանն, զի առաւօտ էր։ Եւ այսպէս Կոստանդինն առեալ զպարոնութիւնն Հայոց կալեալ զՍմբատն և գտեալ զՀէթումն կենդանի ողջացոյց զմի ակն և ինքն թագաւորեաց ամիսս Թ(9)»[13]։

Հայագիտության մեջ որպես թագավոր Սմբատի օծվելու ժամանակ ընդունվում է 1296 թ. հունվարի 6-ը[14]։ Ամսաթիվը հայտնի է, քանի որ Վասիլ գրիչը Սմբատի օծումը դնում է Աստվածահայտնության տոնին[15], իսկ Հայոց եկեղեցին այն տոնում է հունվարի 6-ին[16]։ Սակայն Սմբատը թագավոր է օծվել ոչ թե 1296 թ. հունվարի 6-ին, այլ 1297 թ. հունվարի 6-ին[17]։ Ժամանակի իրադարձություններն արձանագրող գրիչը գահակալական կռիվների մասին թողել է մանրամասն տեղեկություններ. «Եւ գրեցաւ սա ի յաշխարհիս Կիլիկեցւոց, զԱռիստակեսն գրեցի ի լեառն Տորոսի, յԱնապատին որ կոչի Արմէն[18], ընդ հովհանեաւ սուրբ Աստուածածին եւ սուրբ Նշանին, առ ոտս սուրբ եւ երջանիկ վարդապետին Գէորգեա, յաւրինակէ նորին, ի թուին, ՉԽՋ. ի չար ժամանակի, յորժամ Սմբատն թագաւորեաց, եւ ըմբռնեց զանդրանիկ եղբարսն իւր, զՀեթում, յորմէ զպարոնութիւնն ընկալ, եւ եդ ի բանտի ի մոլովոնն, եւ զԹորոսն ի Բարձրաբերդ։ Եւ յետ է ամսոյ զՀեթումն աչուին եհան, ու զԹորոսն խեղդամահ արարեալ սպան։ Ապա միւս եղբայրն Կոստանդին զաւրաժողով արարեալ գնաց ի վերայ Սմբատայ, եւ փախուցեալ զնա յաշխարհն Հոռոմոց։ Վասն որոյ ըմպռնեալ զնա գլխաւորք աշխարհին բերին առնա, եւ նա եդ զնա յարգելանս ի դղեակն իւր կոչեցեալն Կապան, եւ յետոյ փոխեցին յայլ տեղի։ Կալեալ զպարոնութիւնն եւ հանեալ զաւագ եղբայրն իւր ի բանտէ կապանացն, եւ աղաչեալ առնուլ զպարոնութիւնն իւր, և նա ոչ առյանձն։ Եւ կացեալ Կոստանդին ի պարոնութեանն ամիսս ժ, եւ ապա դարձ-

---

13 Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 183։ Ներսես Գալիանենցն իր «Հայոց թագավորների և իշխանների կարգը» աշխատության մեջ (ՄամՄ, ձեռ. № 2037, թ. 133ա) մեզ հետաքրքրող գահակալներին ներկայացնում է այսպես. «Պարոն Հեթում... ամս Ը (8)։ Սմբատն, եղբայր սորայ ամս Բ (2)։ Կոստանդին, եղբայր Սմբատին, ամս. Ա(1)։ Պարոն Հեթում, որ վերոյ դարձեալ ամս Բ(2)»։

14 Մ. Չամչեանց, նշվ. աշխ., հ. Գ, էջ 296, Անապատական, էջ 161 և այլն։

15 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ., կազմեց՝ Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 789 (այսուհետև՝ Հիշատակարաններ, ԺԳ դ.)։

16 Մ. Մսերեանց, Պատմական տեղեկութիւնք ի վերայ տաճի Աստուածայայտնութեան՝ այն է Ծննդեան և Մկրտութեան Քրիստոսի (Ճոաքաղ, հ. Բ, տետրակ ԺԱ, Մոսկվա, 1860, էջ 173)։

17 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 2-րդ, կազմեց՝ Նորայր եպս. Պարեան, Երուսաղէմ, 1967, էջ 258, 497, 504։

18 Հ. Ոսկեան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 110—111, Հ. Տեր-Ղազարեան, Կիլիկեան վանքերը (Բազմավէպ, 1952, էջ 88)։

ձեալ Հեթումն ըմբռնեց զԿոստանդինն եւ եդ յարգելանս ի Սիս, եւ անտի ի Բարձբաբերդ, ե ամիս...»[19]։

Կարծում ենք, ավելորդ չէ մեջբերել հարցի հետ առնչակից մի տեղեկություն ես. «1297 (ՉԽԶ) յուլիս Իդ (23) սպանեց Սմբատն զիր աղբայրն զպարոն Թորոս...»[20]։

Պատմագիտության մեջ լայն քաղաքացիություն է ստացել այն տեսակետը, որ Հեթումն այս անգամ գահակալել է 1299 թ.[21], սակայն աղբյուրների վկայություններից պարզվում է, որ նա գահին տիրացել է ոչ թե 1299 թ., այլ՝ 1298 թ.[22]։ Հավանաբար Կոստանդինի վարած արտաքին և ներքին քաղաքականությունից դժգոհ տարրերը խմբավորվում են Հեթումի շուրջ, և 1298 թ. կեսերին նրան կրկին հռչակում թագավոր[23]։

Մնում է պարզել նաև Թորոսի որդու՝ Լևոնի, գահակալության հարցը, որի շուրջ նույնպես տարբեր տեսակետներ կան։ Հայագիտության մեջ Լևոն Դ-ի գահակալությունը, սովորաբար, ընդունվում է 1301 թ.[24], 1305 թ.[25], 1306 թ.[26]։ Վ. Հակոբյանն ընդունում է, որ Լևոն Դ-ն թագավոր է հռչակվել 1301 թ., երբ երեք տարեկան էր, որի հիմնավորման համար որպես փաստարկ ներկայացնում է հետևյալ տեղեկությունը. «Մի այլ ժամանակակից 1301 թվին ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում գրում է. «...դարձեալ եկն տէր Աբրահամ ի մայրաքաղաքն ի Սիս, որ եղև աշխարհաժողով յամենայն յախուռն, թագաւորն Հայոց Հեթում, զպարոն Թորոսի զիւր եղբաւրորդին, զանբիծ պատանի զԼևոն թագիւ պսակեաց և յամսեանն յունիս յերեսունն, յաւուր յինգշաբթուս»։

Եթե հաստատ է հունիսի 30-ը, ապա օրը կլինի ուրբաթ, հինգշաբթին կլինի 1301 թվի հունիսի 29-ին»[27]։ Մեջբերենք այս հիշատակարանն ամբող-

---

19 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 4-րդ, կազմեց՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 536։

20 Մանր ժամանակագրություններ, հ. I, էջ 106, Ա. Ա. Մաթևոսյան, Հեթում Ախուց տիրոջ և Վասիլ Մարաշախտի ժամանակագրությունները (Պատմա-բանասիրական հանդես, 1963, № 4, էջ 192)։ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 142, 556։

21 Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 192, Rüdt-Collenberg, G. W. H., The Rupenides Hethumides and Lusignans. Paris, 1963, p. 22; Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 764. Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 430։

22 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 6-րդ, կազմեց՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972, էջ 18, Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 822, 829, 831, Recueil des historiens des Croisaqes, Documents Arméniens, t. I, Paris, 1862, p. 464—465, հմմտ. Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 153—154։ Սամվել Անեցու ժամանակագրության շարունակության մի տարբերակում (էջ 164) մեզ հետաքրքրող գահակալները ներկայացված են հետևյալ ժամանակագրական շրջանակներում, «ՌՄՂԸ (ՉԽԵ) Սմբատ՝ ամս Բ (2), ՌՅԱ (ՉԽէ) Կոստանդին կէս ամ. դարձեալ Հեթում»։

23 Անանուն ժամանակագրություն, կազմեցին՝ Հովհ. Մանվելյան, Հար. Աբրահամյան, Երևան, 1940, էջ 29, Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 503, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 240, 242։

24 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 557, Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, մասն Ա, էջ 1763, Rüdt-Collenberg, նշվ. աշխ., էջ 22, Ա. Մաթևոսյան, Հեթում Ախուցաբերջ և Վասիլ Մարաշախտի ժամանակագրությունները, էջ 199 (ծանոթագրություն № 16)։

25 Documets armeniens, t. I, p. LXII, Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 435։ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 766։

26 Լ. Կոգեան, նշվ. աշխ., էջ 487։

27 Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 193—194 (ծանոթագրություն № 69)։

ջությամբ. «Արդ գրեցաւ սա ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտս Դրազարկ ի թուականութեանս Հայոց ՉՍ(1301) ի թագաւորութեանս Հայոց բարեպաշտ եւ սուրբ աբբահն Հայոց Հեթմոյ եւ ի հովւապետութեան տէր Գրիգորոյ եւ յեպիսկոպոսութեան տէր Աբրահամու վանիցն Ղազարու, զոր խնդրեաց յիմս նուաստութենէ եւ ես յաւժար կամաւք գրեցի եւ շնորհեցի զսա սուրբ ուխտիս եւ յեւթն հարիւր յիսուն եւ հինգ ամին դարձեալ եկն տէր Աբրահամ ի մայրաքաղաքն Սիս ուր եղեւ աշխարհաժողով ամենայն ազգաց յախուռն։ Թագաւորն Հայոց Հեթում, զպարոն Թորոսի զիւր եղբաւրորդին, զանբիծ պատանին զԼևոն թաղիւ պակեաց, եւ թագաւորեցոյց արքայապատիւ ճոխութեամբ, որ էր ամաց վեշտասան յամսեանն յունիս յերեսուն յաւուր հինգշաբթւոջն, զորս պահեսցէ տէր երկար ժամանակ»[28]։

Ուրեմն 1299 թ. Հեթում Բ-ն, պահպանելով թագավորական գահը և ավագ պարոնի տիտղոսը, Լևոն Դ-ին նշանակում է իրեն գահակից[29]։ Նրանց համատեղ գահակալությունը հաճախ է հիշատակվում աղբյուրներում[30], իսկ 1306 թ. հունիսի 30-ին վերջինս պաշտոնապես օծվում է Կիլիկյան Հայաստանի թագավոր։

Այժմ քննենք մի տեղեկություն ևս, որը, մեր կարծիքով, հաստատում է այն իրողությունը, որ Գր. Անավարզեցու նամակը շարադրված պետք է լինի 1299 թ. «Եւ յառաջ՝ զայս ասեմք, զոր ի դէպ է, որ մեր հայերուն արևելացւոց մեծերուն զիրքս գիտացուցել եմք և կեցուցել. առաջինն Օրբելին, որ է Սիւնեաց արհիեպիսկոպոս, որպես հոգևոր իշխան գոլով, նոյնպես և մարմնաւոր. և իւր ընկերացն ցուցաք ղգիրքսն և հաստատեցաք այս տարի. և յանցեալ տարին տէր Յոհաննեսի, Առաքելոց եպիսկոպոսին, և միւս այլ ամին Բշնեցուն և Վարագեցեաց։ Զի այժմ, երբ ստոյգ զմտաւ կու ածեմ նայ Գ(3) ամ է, որ այդ առ իս ճշմարտապես յիստակել է...»[31]։

Գր. Անավարզեցու նվիրակը՝ Կոստանդին Կեսարացի եպիսկոպոսը, Արևելք է մեկնել 1297 թ.[32] և տեսակցել Աղթամարի կաթողիկոս Զաքարիայի[33], Արարատյան նահանգի արքեպիսկոպոս Հովհաննեսի, Արտազի վիճակի եպիսկոպոս Հովհաննեսի (1298), ապա 1299 թ. Սյունյաց աթոռի ղեկավար Ստ. Օրբելյանի հետ։ Արևելքում գտնված ժամանակ Կոստանդին Կեսարացին տեսակցել է ժամանակի նշանավոր եկեղեցաքաղաքական գործիչների, այդ թվում Եսայի Նչեցու հետ[34], իսկ վերջինս որպես «ամենայն արևելքից վարդապետ և դասասաց.» կաթողիկոսին առանձին պատասխան է հղել[35]։

---

28 Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, կազմեցին՝ Ս. Ա. Մուրադեան, Ն. Պ. Մարտիրոսեան, խմբագրեց՝ Արայ Գալայճեան, Երուսաղէմ, 1967, էջ 14։

29 ՄաՄ, ձեռ. № 1900, էջ 102, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 4-րդ, էջ 536, Արաբական աղբյուրները..., էջ 244։

30 Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենաշարանին ի Վիեննա, հ. Բ, կազմեց՝ Հ. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 712 (Բ)։ Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 193—194։ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դ., կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 19։

31 ՄաՄ, ձեռ. № 2037, թ. 137 ա։ Հմմտ. Կղ. Գալանոս, էջ 441.

32 Արշ. Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937, էջ 913—914, Անապատական, էջ 166—167։

33 Ինչպես Մ. Օրմանյանը (Ազգապատում, հ. Բ, մասն Ա, էջ 1747) հավանական է համարում, որ 1292—1300 թթ. Աղթամարում կարող էր կաթողիկոս լինել Եղիշե Աղթակեցին, ինչպես 1298 թ. գրված հիշատակարանը հավաստում է. «...ի հայրապետութեան տեառն Զաքարիայի վերագիտողի» (Հիշատակարաններ, ԺԴ դ., էջ 835)։

34 Գր. Սարգսեան, Գրիգոր կթղ. Անաւարզեցի, Նամականի (Բազմավէպ, 1949, (V—VI), էջ 118), Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանքի, կազմեց՝ Ար տ. արք. Սիրմէեան, Վենետիկ, 1948, էջ 209։

35 Կղ. Գալանոս, էջ 444։

Կաթողիկոսին պատասխան տալու համար Արևելյան Հայաստանի հոգևոր և աշխարհիկ ավատատերերի ժողովի և համախոսականի առաքման տարեթիվը հայագիտության մեջ տարբեր ժամանակներ է ընդունվում՝ 1294 թ.[36], 1295 թ.[37], 1295/6 թթ.[38], 1296 թ.[39], 1297 թ.[40], 1302 թ.[41] և այլն։ Այն, որ միաբանության «ձեռնարկը» կազմվել է մինչև 1300 թ., պարզ է դառնում այն հանգամանքից, որ նրա ստորագրողներից մեկը՝ Պապաքը, ենթադրվում է, մահացել է 1299 թ.[42] «Պապաքի անվան վերջին յիշատակությունը գըտնում ենք Խոտակերաց Ս. Նշանի պահարանի արձանագրութեան մէջ, գրուած 1300 թ.[43], դորանից առաջ, գուցէ, 1298/9 թուին արդէն վախճանուած էր Պապաք, որովհետեւ Ստեփանոս Օրբէլեան էաչին արդէն իբրեւ կողմնակալ է յիշում, իսկ նա իւր պատմութիւնը փակում է 1299 թուին»[44]։

Ստորագրող իշխաններից մյուսը՝ Ելիկում Օրբելյանը, մահացել է 1300 թ.[45]։ Մնում է ավելացնել, որ նամակում հիշատակված «Օրբելին» ոչ թե Հովհաննես Օրբելին (1303—1324) է՝ Ստ. Օրբելյանի հաջորդը[46], այլ հենց ինքը՝ Ստ. Օրբելյանը։ Ճիշտ է, աղբյուրներում «Օրբել» անվանումը հաճախ է հանդիպում որպես Հովհաննեսի մականուն[47], սակայն «...որպես հոգևոր իշխան գոլով, նոյնպես և մարմնաւոր»[48] տիտղոսներն ամենից առաջ դրանցված են Ստ. Օրբելյանի անվան դիմաց։

Այսքանից հետո, կարծում ենք, հիմնազուրկ չէ այն կարծիքը, որ «Օրբել» անվանումը, ամենայն հավանականությամբ, արտահայտում է կաթողիկոսի վերաբերմունքը Ստ. Օրբելյանի նկատմամբ, երբ նրան դիմում է ոչ թե անձնանունով, այլ տոհմանունով։ Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում մականունով կամ տոհմանունով դիմելը սովորական երևույթ էր, ընդսմին կաթողիկոսը ենթատեքստում օգտագործել է տոհմանվան «Օրբել» (Օրբեթ-Սրբելք) նախատական ձևը[49]։

---

36 Արել արք. Մխիթարեանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբք, Վաղարշապատ, 1874, էջ 128—131։

37 Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ, Երևան, 1973, էջ 135, 209։

38 Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 76։

39 Աբր. Զամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, Ա մասն, Ն. Նախիջևան, 1908, էջ 255։

40 Լ. Հ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX—XIII դարեր), Երևան, 1981, էջ 332—333։

41 Գր. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII—XV դդ.), Երևան, 1981, էջ 218։

42 Պապաքն որպես «...քաջ և զօրեղ իշխան» (Հիշատակարաններ, ժգ դ., էջ 831), 1298 թ. գրված հիշատակարանում ներկայանում է Ելիկումի հետ, իսկ 1300 թ. ընդօրինակած «Ավետարանի» հիշատակարանում (նույն տեղում, էջ 859) նրա անունն արդեն բացակայում է Պռոշյան ավատատերերի անվանացանկից։

43 Շողակաթ, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 184—185։ Դիվան հայ վիմագրության, պր. III, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 208։

44 Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Խաղբակեանք..., էջ 76։

45 Ս. արք. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 173։ Հմմտ. «Ազգագրական հանդես», 1916, Թիֆլիս, 1917, էջ 58—59։

46 Լ. Խաչիկյան, Արտազի հայկական իշխանությունը և Սործորի դպրոցը, էջ 138։

47 Հիշատակարաններ, ժգ դ., էջ 857—859։

48 Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսականի ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջ 352—353։

49 Նույն տեղում, էջ 272։

Ի մի բերելով վերը շարադրվածը կարող ենք հանգել հետևյալ եզրակացությունների. Ա. Բոնիֆացիոս Ը պապը 1298 թ. հոկտեմբերի 26-ի թվակիր նամակով Հայոց կաթողիկոս Գր. Անավարզեցուց պահանջում էր լուծել երկու եկեղեցիների միավորման խնդիրը՝ հռոմեական եկեղեցու գահերեցության ներքո, սակայն կաթողիկոսը փորձում էր իրագործել ընդհանրական եկեղեցու ստեղծման իր ծրագիրը[50]։ Բ. 1296—98 թթ. Կիլիկյան Հայաստանում խմորվում էին գահակալական արյունահեղ կռիվներ։ 1296—1297 թթ. գահին տիրում է Սմբատը, ապա կարճ ժամանակամիջոցում այն անցնում է Կոստանդինի ձեռքը։ 1298 թ. կեսերին Հեթում Բ-ն վերստին գրավում է գահը՝ իրեն գահակից ընտրելով Լևոնին, իսկ 1306 թ. հունիսի 30-ին վերջինս պաշտոնապես օծվում է թագավոր։ Գ. Կաթողիկոսն իր նպատակադրումների մասին (ճիշտ է, ոչ բոլոր հարցերում) տեղյակ է պահում նաև Հայաստանի եկեղեցական խոշոր թեմերի առաջնորդներին։ 1299 թ. Սյունիքում կազմվում է մի համախոսական, որի ստորագրողները Գր. Անավարզեցուց պահանջում էին հրաժարվել իր ծրագրից և անխախտ պահել հայ եկեղեցու հավատո հանգանակը։ Դ. 1299 թ. Գր. Անավարզեցին նամակ է ուղարկում Հեթում Բ թագավորին։ Այդ նամակին մեծ դեր էր վերապահված խաղալու, քանի որ այն դարձավ Կիլիկիայում լատինասերների կուսակցության ծրագիրը և նրա հիմքի վրա երկար ժամանակ խմբավորվում էին արևմտաեվրոպական կողմնորոշման ուժերը։

К ВОПРОСУ ДАТИРОВКИ ПИСЬМА КАТОЛИКОСА ГРИГОРИЯ VII АНАВАРЗЕЦИ, АДРЕСОВАННОГО ЦАРЮ ХЕТУМУ II

Г. С. АРУТЮНЯН

Резюме

В конце XIII в. в Киликии появилось письмо (завещание) католикоса Григория Анаварзеци царю Хетуму II по решению проблемы ожидаемой военно-политической помощи из Западной Европы путем объединения армянской церкви с римско-католической.

Письмо, о датировке которого имеются различные мнения, следует датировать 1299 г. В связи с этим уточняются также некоторые другие детали, в том числе начало совместного правления Хетума II и Левона IV (1298 г.), официальная коронация Левона IV (30 июня 1306 г.) и дата всеобщего собора духовных и светских феодалов Восточной Армении (1299 г.).

---

50 Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 448։